«Կանայք քաղաքականության, **հանրային** կառավարման և քաղաքացիական հասարակության մեջ» ծրագիր

ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց քաղաքական մասնակցությունը բնութագրվում է ազգային և տեղական ընտրություններին նրանց մասնակցության, երկրի կառավարման գործընթացներում և որոշումների կայացման մակարդակում նրանց ներկայացվածության ցուցանիշներով: Ու թեև գենդերային քվոտայի կիրառման արդյունքում Ազգային ժողովում և ավագանիներում կանանց ներկայացվածության առումով ակնհայտ դրական արդյունքներ են գրանցվել վերջին խորհրդարանական և ՏԻՄ ընտրություններից հետո, այնուամենայնիվ կանայք շարունակում են թերներկայացված լինել երկրի կառավարման բարձրագույն պաշտոններում, մարզային և ՏԻՄ ղեկավար պաշտոններում: Կանանց ներուժն անտեսված է երկրի կառավարման և քաղաքականության մեջ, լիարժեք մասնակցելու ճանապարհին նրանք բախվում են բազմաթիվ խոչընդոտների, և միայն եզակի կանանց է հաջողվում դրանք հաղթահարել: Մինչդեռ կառավարման համակարգում սեռերի հավասարակշռված ներկայացվածությունը ոչ միայն ժողովրդավարության առավել արդյունավետ գործընթացների անհրաժեշտ պայման է, այլ նաև մարդու իրավունքների և սոցիալական արդարության պահանջ: Հետևաբար, պետության կողմից իրականացվող քաղաքականությունը՝ ուղղված կանանց լիարժեք մասնակցության համար հավասար հնարավորություններ ապահովելուն, պետք է հիմնված լինի այդ տրամաբանության վրա և գնահատվի այդ նույն տրամաբանության շրջանակում:

****

ՄԱՍ 1.ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Կանանց քաղաքական մասնակցության ապահովման և ընդլայնման իրավական երաշխիքները ամրագրված են ՀՀ Սահմանադրության և ազգային օրենսդրության մեջ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների մաս են կազմում:

Թեմային առնչվող ազգային և միջազգային փաստաթղթերի ցանկը ներառում է.

- **ՀՀ Սահմանադրությունը**, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ գենդերային քաղաքականության հայեցակարգը, ՀՀ գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թթ. ռազմավարությունը և միջոցառումների ծրագիրը, ՀՀ ընտրական օրենսգիրքը, «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը.
- **ՄԱԿ-ի փաստաթղթերը**, այդ թվում՝ Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (1952), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (1979), Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը (1995), Օրակարգ 2030. Կայուն զարգացման նպատակները (2015).
- **Եվրոպական կառույցների փաստաթղթերը**, այդ թվում՝ ԵԽ նախարարների կոմիտեի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) բանաձևերը, ԵԱՀԿ-ի, Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի և այլ կառույցների փաստաթղթերը:

Կարևոր է, որ Պեկինի գործողությունների ծրագրից սկսած բոլոր միջազգային փաստաթղթերում կանանց քաղաքական մասնակցության ընդլայնումը և որոշումների ընդունման մակարդակում կանանց ներկայացվածության «կրիտիկական զանգված» (առնվազն 30% ներկայացվածություն) ապահովելու տեսլականը դիտարկվում են կանանց առաջնորդության կայացման անհրաժեշտության հետ միասնության մեջ:

Տրամաբանական այդ հենքը վերահաստատվել է Պեկին + 25 գործընթացի շրջանակում ընդունված Քաղաքական հռչակագրում[1] և 2021 թվականին՝ **ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 65-րդ նստաշրջանում ընդունված համաձայնեցված եզրակացություններում** (Agreed Conclusions)[2], որոնց շրջանակում աշխարհի երկրների առաջնորդները պարտավորություն ստանձնեցին զգալիորեն արագացնել կանանց ներկայացվածության աճը պետական կառավարման ղեկավար պաշտոններում:

Խնդրին անդրադարձ է կատարված 2022 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունված **Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի Հայաստանին ուղղված եզրափակիչ դիտարկումներում**[3], որոնց շրջանակում առաջարկվում է ընդլայնել ժամանակավոր հատուկ միջոցների կիրառումը կանանց թերներկայացվածությունն իշխանության բոլոր մակարդակներում և ճյուղերում հաղթահարելու նպատակով:

Կոմիտեի դիտարկումների համատեքստում կարևորվում է ՀՀ ընտրական օրենսգրքում գործող գենդերային քվոտայի կիրառման արդյունավետության գնահատումը:

Ընտրական գործընթացներում կանանց մասնակցությունը խթանելու նպատակով կիրառվող ժամանակավոր հատուկ միջոցները առաջին անգամ ներդրվել են ՀՀ ընտրական օրենսգրքում 2002 թվականին՝ Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի կողմից 1997 թ. և 2002 թ. արված եզրափակիչ դիտարկումների[4] իրականացման շրջանակում:

---

[1]Political declaration on the occasion of the twenty-fifth anniversary of the Fourth World Conference on Women https://www2.unwomen.org/-/media/headquarters/attachments/sections/news%20and%20events/stories/2020/csw64-politicaldeclaration.pdf?la=ru&vs=1220

[2] CSW65 Agreed Conclusions https://www.unwomen.org/-/media/headquarters/attachments/sections/csw/65/csw65_agreed_conclusions_advance_unedited_version_29_march_2021.pdf?la=en&vs=5504

[3] Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) իրականացման Հայաստանի Հանրապետության 7-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ Concluding observations on the seventh periodic report of Armenia https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CEDAW%2fC%2fARM%2fCO%2f7&Lang=en

[4] Concluding observations A/52/38/REV.1(SUPP) paras. 35-68 https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=A%2f52%2f38%2fREV.1(SUPP)&Lang=en; Concluding observations A/57/38(SUPP) paras. 25-69 https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=A%2f57%2f38(SUPP)&Lang=en

Գործող օրենսդրությամբ՝ կանանց ներգրավումը կուսակցությունների ընտրացուցակներում կարգավորվում է ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված գենդերային քվոտայով: 2021 թվականի արտահերթ խորհրդարանական և ՏԻՄ ընտրություններին ընդառաջ կատարված ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունները լրացուցիչ երաշխիքներ տվեցին կին թեկնածուների մասնակցության առումով: Մասնավորապես.

- 2021 թվականից ուժի մեջ մտավ ՀՀ ընտրական օրենսգրքի 83.4-րդ հոդվածը, որը սահմանում է թեկնածուների առնվազն 30/70 համամասնությունը քաղաքական ուժերի ընտրացուցակներում:
- 2020 թվականի հունիսի 18-ին ընդունված փոփոխություններով անցում կատարվեց համամասնական ընտրակարգի նաև ՏԻՄ ընտրություններում: Ըստ այդմ՝ 4000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում, նաև բազմաբնակավայր համայնքներում համայնքի ավագանու ընտրությունները անցկացվում են համամասնական ընտրակարգով, ինչը նշանակում է, որ այդ բոլոր համամասնական ընտրությունների ժամանակ գործում է ՀՀ ընտրական օրենսգրքով ամրագրված գենդերային քվոտան:
- Մինչև 4000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարը և ավագանու անդամները ընտրվում են մեծամասնական ընտրակարգով, և այս դեպքում գենդերային քվոտան չի գործում:
- 2021 թ. ապրիլին ընդունված «ՀՀ ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-171-Ն) անցում կատարվեց պարզ համամասնական ընտրակարգի (առանց տարածքային ցուցակների): Հրաժարումն այսպես կոչված ռեյտինգային ցուցակներից, որոնք կոշտ մրցակցություն էին ենթադրում թեկնածուների միջև ընտրատարածքներում, կտրուկ բարձրացրեց կին թեկնածուների ընտրվելու շանսերը և ապահովելու կանանց առնվազն 30% ներկայացվածությունը նորընտիր մարմնում:

Կանանց մասնակցությունը 2021 թվականի հունիսի 20-ին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական և դրանց հաջորդած ՏԻՄ ընտրությունների ընթացքում կարգավորվել է ՀՀ ընտրական օրենսգրքի հետևյալ հոդվածներով, որոնք երաշխիքներ են պարունակում ոչ միայն կուսակցությունների ընտրացուցակներում կանանց մասնակցության, այլ նաև ընտրված մարմիններում նրանց ներկայացվածության առումով.

- ✓ **83.4-րդ հոդվածով սահմանված դրույթով**, որն ուժի մեջ է մտել 2021 թվականին և վերաբերում է համամասնական ցուցակներին.
  «Կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի առաջին մասում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 %-ը»:
- ✓ **100.2-րդ հոդվածով սահմանված դրույթով**, որը վերաբերում է մանդատների տրամադրմանը պատգամավորներին.
  «...Եթե կուսակցության բոլոր մանդատները բաժին են հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա վերջին թեկնածուն իր մանդատը զիջում է ընտրական ցուցակի առաջին մասի՝ չներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուին, եթե կա»:
- ✓ **100.3-րդ հոդվածով սահմանված դրույթով**, որով երաշխավորվում է, որ *«եթե մանդատից հրաժարվելու արդյունքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է, և արդյունքում ցածր է լինելու 25 %-ից, ապա մանդատը տրվում է այդ նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին»:*
- ✓ **130.2-րդ հոդվածով սահմանված դրույթով**, որը վերաբերում է համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու անդամի թեկնածուների առաջադրմանը և տարածվում է, բացի Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրություններից, նաև 4000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքների վրա.
  «Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակի 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 %-ը»:
- ✓ **141.6-րդ հոդվածով սահմանված դրույթով**, որը վերաբերում է համայնքների ավագանիների ընտրությունների արդյունքների ամփոփմանը և մանդատների բաշխման կարգին.
  «Եթե կուսակցության մանդատների 70 %-ից ավելին բաժին է հասնում նույն սեռի ներկայացուցիչներին, ապա առավել շատ ներկայացված սեռի՝ 70 %-ը գերազանցող մանդատները տրամադրվում են ընտրական ցուցակի՝ պակաս ներկայացված սեռի նվազագույն համարով թեկնածուներին, եթե այդպիսիք առկա են՝ ապահովելով պակաս ներկայացված սեռի 30 %-ից ոչ պակաս ներկայացվածություն»:
- ✓ **141.8-րդ հոդվածով սահմանված դրույթով**, որը վերաբերում է ընտրված խմբակցությունում մանդատից հրաժարվելուն. *«..եթե մանդատից հրաժարվելու կամ ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում տվյալ խմբակցության որևէ սեռի ներկայացուցիչների թիվը նվազում է և արդյունքում ցածր է լինելու 25 %-ից, ապա տրվում է այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի նվազ ներկայացված սեռի հաջորդ թեկնածուին, եթե կա»:*

ՄԱՍ 2.ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՄՆԱԿՑՈՒՅՈՒՆԸ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասնակից 25 քաղաքական ուժերն (21 կուսակցություն և 4 դաշինք) ընդհանուր առմամբ ներկայացրել են իրենց ցուցակներում **2613 թեկնածու, որոնցից 956-ը կամ 36.6%-ը կանայք են, ինչն** ավելի է, քան Ընտրական օրենսգրքում ամրագած պահանջը կուսակցությունների ցուցակներում թեկնածուների սեռերի համամասնության վերաբերյալ: Դա նաև ավելի է, քան ներկայացրել էին քաղաքական ուժերը 2018 թ. ԱԺ արտահերթ ընտրություններին:

Կանանց ներկայացվածությունը քաղաքական ուժերի ընտրացուցակներում
2018 թ. և 2021 թ. խորհրդարանական ընտրություններում





Աղբյուրը՝ WomenNet.am

Քաղաքական ուժերի ընտրացուցակներում կանանց ընդգրկվածության ցուցանիշը տատանվում էր 31-44 %-ի սահմաններում: Խորհրդարանական ընտրությունների մասնակից քաղաքական ուժերից 20-ը 31-40% կին թեկնածու են ներկայացրել իրենց ցուցակներում, 6-ը՝ 40-44%[5]:

[5] Ըստ օրենքի՝ ընտրացուցակներն ունեն նաև երկրորդ մաս՝ նախատեսված ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ հանդիսացող թեկնածուների համար: Այդ մասում ընդգրկված է եղել ընդհանուր թվով 14 թեկնածու, որոնցից 3-ը՝ կին: Ընդ որում՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ են ընդգրկել միայն 5 քաղաքական ուժ՝ «Հայ ազգային կոնգրես», «Քաղաքացիական պայմանագիր», «Բարգավաճ Հայաստան», «Ինքնիշխան Հայաստան» կուսակցությունները և «Հայաստան» կուսակցությունների դաշինքը:

Խորհրդարանական ընտրություններ-2021.

Կանանց ներկայացվածությունը քաղաքական ուժերի ընտրացուցակներում



Աղբյուրը՝ WomenNet.am

25 քաղաքական ուժերից միայն երկուսի ցուցակներն էին գլխավորում կանայք՝ «Միասնական հայրենիք» կուսակցության ընտրացուցակի առաջին համարը Լուսինե Ավագյանն էր և «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցության առաջին հորիզոնականում Կարին Տոնոյանն էր: Թեև «Հայոց հայրենիք» կուսակցության նախագահը կին է՝ Անահիտ Եղոյանը, նա ընտրացուցակի երկրորդ տեղում էր ներկայացված:

Ցուցակները ձևավորելիս քաղաքական ուժերի գերակշիռ մասն առաջնորդվել է օրենքի ներքևի շեմի պահանջով՝ հատկացնելով առաջին կին թեկնածուներին երրորդ հորիզոնականը: Միայն երեք քաղաքական ուժերի ցուցակներում կանայք երկրորդ հորիզոնականում էին ներկայացված:

Խորհրդարանական ընտրությունների արդյունքում ընտրված 8-րդ գումարման Ազգային ժողովի **107 պատգամավորներից 36-ը կամ 33.6%-ը կին են (2022 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ՝ 35.5%)**: Ըստ էության, օրենքով ամրագրված քվոտայի ավելացումը 5%-ի չափով ապահովել է Ազգային ժողովում կանանց ներկայացվածության 11.5%-ով աճը, ինչը վկայում է կիրառված քվոտայի արդյունավետության մասին:

Խորհրդարանում կանանց ներկայացվածության շարժընթացը 2018 և 2021 թթ. ընտրությունների արդյունքներով

Աժ ընտրություններ	Կիրառված քվոտայի չափը	Քաղաքական ուժերի ընտրացուցակներում կանանց ներկայացվածություն	Նորընտիր Ազգային ժողովի կազմում կանանց ներկայացվածություն	Աճը նախորդ գումարման համեմատ
2018թ.	25%	32%	24%	+7%
2021 թ.	30%	37%	35.5%	+ 11.5%

Ըստ ԿԸՀ տվյալների

Քվոտայի ներդրումից հետո Ազգային ժողովում կանանց ներկայացվածության շարժընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ քվոտան առավել արդյունավետ է աշխատել հենց 2021 թվականի խորհրդարանական ընտրություններում, ինչը պայմանավորված է պարզ համամասնական ընտրակարգին անցնելու հանգամանքով, որը, ի տարբերություն տարածքային ցուցակների կիրառման պրակտիկայի, երաշխավորեց կանանց ներկայացվածությունը ընտրված մարմնում ոչ միայն սահմանված քվոտայի չափով, այլև ավելին:

Խորհրդարանում կանանց ներկայացվածության շարժընթացը քվոտայի ներդրումից հետո

Տարի	Գումարում	Ներդրված քվոտա	Ընտրակարգ	Կանանց ներկայացվածությունը խորհրդարանում
1995	1-ին գումարում	-	40համամասնական/ 150 մեծամասնական	6%
1999	2-րդ գումարում	-	56 համամասնական/ 75 մեծամասնական	3.1%
2003	3-րդ գումարում	5%	75 համամասնական/ 56 մեծամասնական	5.3%
2007	4-րդ գումարում	15%	90 համամասնական/ 41 մեծամասնական	9.2%
2012	5-րդգումարում	20%	90 համամասնական/ 41 մեծամասնական	10.7%
2017	6-րդ գումարում	25%	համամասնական/ տարածքային	18%
2018	7-րդ գումարում	25%	համամասնական/ տարածքային	24%
2021	8-րդ գումարում	30%	Պարզ համամասնական	34%

Ըստ ՀՀ Ազգային ժողովի տվյալների

Թեև քվոտան ակնհայտորեն բարելավել է կանանց ներկայացվածության ցուցանիշներն Ազգային ժաղովում, սակայն այն ազդեցություն չունեցավ խորհրդարանի ղեկավար պաշտոններում կանանց ներկայացվածության վրա:

Կանանց թիվը 8-րդ գումարման Ազգային ժողովի ղեկավար կազմում անհամաչափ ցածր է խորհրդարանի պատգամավորական կազմում կանանց ներկայացվածության համեմատ. կանայք ընդամենը 10.5 %-ով են ներկայացված ԱԺ խորհրդի կազմում՝ գլխավորելով ԱԺ 12 մշտական հանձնաժողովներից միայն երկուսը: Հատկանշական է, որ 2007 թ.-ից սկսած ԱԺ փոխխոսնակներից մեկը մշտապես կին է եղել, սակայն 8-րդ գումարման խորհրդարանում երեք փոխխոսնակների թվում կանայք չկան: Խոսնակի պաշտոնը նորանկախ Հայաստանի խորհրդարանում երբևիցե կին չի զբաղեցրել:

Խնդիրն առավել բացահայտ է երևում քվոտայի կիրառման և Ազգային ժողովի պատգամավորական և ղեկավար կազմում կանանց ներկայացվածության շարժընթացների համեմատության արդյունքում:

Կանանց ներկայացվածության շարժընթացը Ազգային ժողովի ղեկավար կազմում 2012-2021թթ.



Աղբյուրը՝ WomenNet.am

Կարելի է փաստել, որ քվոտայի կիրառման արդյունքում կանանց ներկայացվածության կտրուկ աճը Ազգային ժողովում չի հանգեցրել օրենսդիր մարմնում կանանց «կրիտիկական զանգվածի» ձևավորմանը՝ խորհրդարանի ղեկավար կազմում նրանց անհամեմատ ցածր ներգրավման պատճառով: Ըստ էության, կանանց ավելի քան 30% ներկայացվածությունն Ազգային ժողովում չի հանգեցրել քաղաքական որոշումների վրա նրանց իրական ազդեցության մեծացմանը՝ ի հայտ բերելով կանանց քաղաքական առաջնորդության կայացման հետ կապված խնդիրների ողջ սպեկտրը՝ սկսած կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմի բացակայությունից վերջացրած կանանց քաղաքական առաջընթացի համար կուսակցությունների պատասխանատվության պակասով:

Կանանց քաղաքական առաջնորդության կայացման հարցում թերացումների հետևանքով Հայաստանում իշխանության բարձրագույն պաշտոնները շարունակում են տղամարդկանց ձեռքին մնալ. ՀՀ նախագահը, վարչապետը, փոխվարչապետները, վարչապետի աշխատակազմի ղեկավարը տղամարդ են: ՀՀ Կառավարության գենդերային կազմը չի արտացոլում Ազգային ժողովում քվոտայի շնորհիվ արձանագրված փոփոխությունները. 12 նախարարություններից միայն մեկն է կին ղեկավարում, և այդ միտումը պահպանվել է 2017-2021 թթ. երեք կաբինետների կազմում: Կանանց ներկայացվածությունը նկատելի է միայն փոխնախարարների պաշտոնում, որոնք սակայն քաղաքական որոշումների վրա

ազդեցության իրավասություններ չունեն՝ 47 փոխնախարարից 9-ն են կին (19%), ընդ որում՝ նախարարությունների կեսում կին փոխնախարարներ չկան: Ինչ վերաբերում է մարզային իշխանությունում կանանց ներկայացվածությանը, ապա տասը մարզերից միայն մեկն է կին ղեկավարում և փոխմարզպետներից միայն մեկն է կին:

Ամփոփելով կարելի է փաստել, որ թեև 2021 թ. խորհրդարանական ընտրություններում գենդերային քվոտայի արդյունավետ կիրառման շնորհիվ Ազգային ժողովում արձանագրվել է զգալի առաջընթաց կանանց ներկայացվածության ցուցանիշների առումով, դրա հետ մեկտեղ ակնհայտորեն խախտվել է գենդերային արդարության սկզբունքը օրենսդիր մարմնի ղեկավար կազմի և գործադիր իշխանության ձևավորման հարցում: Դրանով իսկ չեզոքացվել է գենդերային քվոտայի արդյունավետությունը՝ որոշումների ընդունման մակարդակում իրական ժողովրդավարություն երաշխավորելու տեսանկյունից, և ի հայտ են եկել կանանց քաղաքական առաջնորդության ձևավորման հարցում առկա թերացումները:

ՄԱՍ 3. ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՅՑՈՒՆԸ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների՝ 2021-2022 թթ. համամասնական ընտրակարգով տեղի ունեցած ՏԻՄ ընտրություններին գենդերային քվոտայի կիրառման շնորհիվ զգալի առաջընթաց է արձանագրվել ավագանիների կազմում կանանց ներկայացվածության առումով:

Ավագանիների կազմում կանանց ներկայացվածության շարժընթացը

Տեղեկապատկերի աղբյուրը՝ WomenNet.am
Ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների

2021 թվականին 52 համայնքում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները 45-ում անցկացվել են համամասնական ընտրակարգով, ազգային փոքրամասնություններով բնակեցված 7 համայնքում՝ մեծամասնական ընտրակարգով:

Համամասնական ընտրակարգով բոլոր ընտրություններին մասնակցած 66 քաղաքական ուժերը ընդհանուր առմամբ 167 ընտրացուցակներ են ներկայացրել, որոնցում ընդգրկված 5350 թեկնածուներից 1798-ը կամ 34%-ը եղել են կանայք: Ինքնաբացարկներից կամ փաստաթղթերը հետ վերցնելուց հետո թեկնածուների թիվը կազմել է 4547, ու թեև ինքնաբացարկի դիմած կանանց ու տղամարդկանց թիվը գրեթե հավասար է եղել, արդյունքում կանանց ներկայացվածությունը ցուցակներում իջել է՝ կազմելով 31%:

ԿԸՀ տվյալներով՝ 2021 թ. ՏԻՄ համամասնական ընտրությունների արդյունքում ընտրվել է ավագանու 1008 անդամ, որից 313-ը կամ 31 %-ը կանայք են: Հաշվի առնելով, որ մինչև ընտրությունները 45 խոշորացված փնջերում ընդգրկված համայնքներում ավագանու 3205 անդամներից 280-ն են եղել կին (8.7%), կանանց ներկայացվածությունը նշված համայնքներում աճել է առնվազն 3.5 անգամ՝ 8.7%-ից 31%:

Մեծամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններին, որոնք անցկացվել են 7 ազգային փոքրամասնություններով բնակեցված համայնքներում, մասնակցել է 64 թեկնածու, որից 13-ը կամ մոտ 20%-ը եղել են կանայք: Առաջադրված թեկնածուներից ընտրվել են 40-ը, որից 5-ը՝ կանայք, ինչը 12.5% է կազմում և ոչ միայն գրեթե կիսով չափ ցածր է քվոտայի կիրառմամբ անցկացված համամասնական ընտրությունների արդյունքներից, այլև ավելի ցածր է, քան մինչև ընտրությունները նշված 7 համայնքների ավագանիներում կանանց ներկայացվածությունը, որը 17.5% էր կազմում:

Կանանց մասնակցությունը 2021 թ. ՏԻՄ ընտրություններին

ՏԻՄ ընտրություններ 2021	Մինչ ընտրությունները ավագանիներում կանանց ներկայացվածության % -ը	Քաղաքական ուժերի ընտրացուցակներում կանանց ներկայացվածության % -ը	Նորընտիր ավագանիների կազմում կանանց ներկայացվածության %-ը
Համամասնական ընտրակարգով 45 համայնքներում	8.7%	34%	31%
Մեծամասնական ընտրակարգով 7 համայնքներում	17.5%	20%	12.5%

Ըստ ԿԸՀ տվյալների

Համեմատելով 2021 թ. համամասնական և մեծամասնական ընտրակարգով անցկացված ՏԻՄ ընտրությունների արդյունքները՝ կարելի է փաստել, որ ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված գենդերային քվոտան, որը կիրառվել է ՏԻՄ համամասնական ընտրություններին, մեծապես նպաստել է ավագանիների կազմում կանանց տոկոսային ներկայացվածության բարձրացմանը: Մեծամասնական ընտրությունների դեպքում քվոտան չի գործել, և ի հետևանք առաջընթացի փոխարեն որոշակի հետընթաց է գրանցվել:

Քվոտայի կիրառման շնորհիվ դրական արդյունքներ են արձանագրվել նաև 2022 թվականի սեպտեմբերի 25-ին Հայաստանի 8 մարզերի 17 համայնքներում կայացած ընտրությունների արդյունքում: Ընտրություններին մասնակցած 54 կուսակցություններ և կուսակցությունների դաշինքներ ներկայացրել են իրենց ընտրացուցակներում միջինը 34% կին թեկնածուներ: Ընտրված 321 ավագանու անդամից 99-ը կամ 30.85%-ը կին են, ինչը զգալի առաջընթաց է մինչև ընտրություններն այդ նույն համայնքների ավագանիներում կանանց ներկայացվածության համեմատ:

Ինչ վերաբերում է համայնքի ղեկավարի ընտրություններին, ապա այս հարցը քվոտայի միջոցով չի կարգավորվում և համամասնական ընտրակարգի դեպքում մեծապես կախված է քաղաքական ուժերի կողմից ներկայացվող ցուցակներից, որոնք եզակի դեպքերում են կանայք գլխավորում: Հազվադեպ են նաև կանանց առաջադրումները համայնքի ղեկավարի պաշտոնում մեծամասնական ընտրակարգի դեպքում:

Այսպես, 2021 թվականին անցկացված բոլոր ՏԻՄ համամասնական ընտրություններին 167 ընտրացուցակներից միայն 4-ի դեպքում են կանայք ընտրացուցակը գլխավորել:

Ընտրությունների արդյունքում այդ կանանցից միայն երկուսն են ընտրվել համայնքի ղեկավար, ընդ որում՝ այդ կանայք մինչև ընտրություններն են ղեկավարել իրենց համայնքները, այսինքն՝ նրանք վերընտրվել են:

Համայնքի ղեկավարի ընտրություններին, որոնք անցկացվել են ազգային փոքրամասնություններով բնակեցված 5 համայնքներում, առաջադրվել են 12 թեկնածուներ, նրանց թվում կանայք չեն եղել: Մինչև ընտրություններն էլ այդ համայնքները կանայք չեն ղեկավարել:

2022 թվականին կայացած ՏԻՄ ընտրություններին քաղաքական ուժերի կողմից առաջադրված ընտրական 54 ցուցակներից միայն մեկն էր կին գլխավորում, որը սակայն չընտրվեց: Բացառիկ դեպք արձանագրվեց Բերդ համայնքում, որտեղ ՏԻՄ ընտրություններում հաղթած դաշինքի ցուցակը գլխավորող թեկնածուն կալանավորվեց, և համայնքի ղեկավար ընտրվեց նույն դաշինքի կին թեկնածուն, որը ընտրական ցուցակի երրորդ համարն էր:

ՏԻՄ-երում կանանց ներկայացվածության շարժընթացը

	2012	2016	2020	2022
Կանայք ավագանիների կազմում	9.6%	11.7%	10.7%	25.6%
Համայնքների կին ղեկավարներ	2%	2.1%	1.8%	5.6%
Կանայք վարչական ղեկավարների թվում	-	-	5.4%	5.5%
Համայնքների թիվ	915	793	502	71

Ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տվյալների

Դիտարկելով շարժընթացը 2020 թվականի համեմատ՝ կարելի է փաստել, որ եթե 2020-ին Հայաստանի 502 համայնքներից 9-ն էին կանայք ղեկավարում, ինչը 1.8% էր կազմում, ապա 2022 թվականի տվյալներով՝ 71 համայնքներից 4-ն են (5.6 %) կանայք ղեկավարում՝ Արմավիրի Վաղարշապատ, Շիրակի Ամասիա, Տավուշի Բերդ խոշորացված համայնքներն ու Արարատի մարզի չխոշորացված Վերին Դվին համայնքը:

Վարչական ղեկավարների թվում կանանց ներկայացվածության շարժընթացի դիտարկումը ցույց է տալիս, որ եթե 2020 թվականի դրությամբ 409 վարչական ղեկավարներից 22-ն էին կին կամ 5.4%-ը, ապա 2022 թ. տվյալներով ՝ 781 վարչական ղեկավարներից 43-ն են կին կամ 5.5%-ը: Հարկ է նշել սակայն, որ որոշումներ ընդունելու վարչական ղեկավարների

իրավասությունների շրջանակը շատ ավելի սահմանափակ է, քան համայնքների ղեկավարներինը:

Ավագանիներում կանանց ներկայացվածության շարժընթացը հաստատում է գենդերային քվոտայի արդյունավետությունը: Կարևոր է, որ ի տարբերություն 2020 թվականի, երբ կեսից ավելի համայնքների ավագանիների կազմում կին չկար, այսօր քվոտայի կիրառման շնորհիվ սակավաթիվ համայնքներում է, որ կանայք ընդգրկված չեն, այն էլ՝ ՏԻՄ ընտրություններում ի հայտ են եկած մի շարք հանգամանքների բերումով, որոնք նվազեցրել են քվոտայի ազդեցությունը:

Մասնավորապես, մի շարք դեպքեր արձանագրվեցին, երբ քաղաքական ուժերի ընտրացուցակներում քվոտայի պահանջը պահպանվում է, և ընտրացուցակներում ոչ պակաս, քան 30% կին թեկնածու է ընդգրկվում, սակայն ընտրությունների արդյունքում ձևավորված ավագանու կամ խմբակցության կազմում կանայք չեն ընդգրկվում: Պատճառը ընտրացուցակներում ընդգրկված կանանց կողմից ինքնաբացարկ հայտնելը կամ մանդատից հրաժարվելն է, ինչի արդյունքում մանդատները բաշխելու պահին ընտրացուցակներում կին թեկնածու ընդհանրապես չի մնում, և ավագանին համալրվում է միայն տղամարդ թեկնածուներով: Այս պարագայում, ըստ էության, չեն աշխատում նաև Ընտրական օրենսգրքի 141-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ կետերով նախատեսված երաշխիքները, ըստ որոնց պակաս ներկայացված սեռի 30% ներկայացվածության պահանջ է դրված մանդատների բաշխման արդյունքում և առնվազն 25% ներկայացվածության պահանջ՝ ընտրված խմբակցությունում մանդատից հրաժարվելու դեպքում:

Ընդհանուր առմամբ, միայն 2021 ընտրություններում արձանագրվել է 12 դեպք, երբ ընտրական գործընթացի տարբեր փուլերում ընտրացուցակի բոլոր կանայք հանել են իրենց թեկնածությունը, 9 դեպք, երբ ընտրացուցակում մնացել է միայն մեկ կամ երկու կին թեկնածու:

Պատճառաբանությունների շրջանակը բավականին լայն է և լրացուցիչ հետազոտման կարիք ունի: Օրինակ՝ ընտրված կին ավագանիները գերադասել են շարունակել իրենց վարձատրվող աշխատանքը որպես համայնքապետարանի աշխատող, կանայք դիմել են ինքնաբացարկի քաղաքական բնույթի ճնշումների հետևանքով, կանանց հրաժարումը մանդատներից կուսակցության որոշում էր, կանանց ընդգրկումը ընտրացուցակում ի սկզբանե ձևական բնույթ

է կրել, և կանայք ընդգրկվել են ընտրացուցակում առաջադրվելու պահին՝ օրենքի պահանջը կատարելու համար միայն, ինչից հետո դիմել ինքնաբացարկի, և այլն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդները մատնանշել էին Հայաստանի ընտրություններում կանանց ձևական առաջադրումների փաստը դեռևս 2018-ի դեկտեմբերի 9-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ իրենց վերջնական զեկույցում. «*գենդերային քվոտան ենթադրում է, որ կուսակցությունների կողմից առավել մեծ ջանքեր պետք է գործադրվեն կանանց քաղաքական մասնակցությունը քաջալերելու և դյուրացնելու հարցում, ցավոք, ընտրապայքարի մասնակիցներից շատերը կանանց ընտրացուցակներում ներգրավվում էին միայն ձևականորեն*»[6]: Ակնհայտ է, որ խնդիրն առկա է ու խորացել է ՏԻՄ ընտրությունների պարագայում, ինչը հաստատվում է հետազոտությունների և տեղերում քննարկումների արդյունքում:

Ընդհանուր առմամբ, ՏԻՄ ընտրությունների անցումը համամասնական ընտրակարգի և գենդերային քվոտայի կիրառումն ակնհայտ դրական ազդեցություն են ունեցել ավագանիների կազմում կանանց ներկայացվածության բարձրացման առումով, թեև նկատվել են որոշակի երևույթներ, որոնց պատճառով նվազեցվել է քվոտայի ազդեցությունը: Անցումը համամասնական ընտրակարգի գրեթե չի ազդել համայնքի ղեկավարների շրջանում կանանց թվի ավելացման վրա՝ ի հայտ բերելով կանանց քաղաքական առաջնորդության չկայացվածության խնդիրը:

ՄԱՍ 4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ խորհրդարանում և ՏԻՄ-երում կանանց ներկայացվածության շարժընթացի վերլուծությունը, թեմային առնչվող փաստաթղթերի, հետազոտությունների ու փորձագետների գնահատականները, ինչպես նաև Երևանում և մարզերում անցկացված քննարկումների արդյունքները հանգեցրել են հետևյալ եզրակացությունների.

- Ազգային օրենսդրությունը համահունչ է միջազգային փաստաթղթերի հանձնարարականներին: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրված գենդերային քվոտայի չափն ու ձևակերպումները իրական հիմք են Ազգային ժողովում և ՏԻՄ-երում կանանց ներկայացվածությունը զգալի բարձրացնելու համար:

[6] https://www.osce.org/odihr/elections/armenia/413567

- 2021 թ. խորհրդարանական և ՏԻՄ ընտրությունների արդյունքում Ազգային ժողովում և ավագանիներում կանանց ներկայացվածությունը զգալի բարձրացել է նախորդ տարիների համեմատ, ինչը թույլ է տալիս գնահատել կիրառված քվոտան որպես կանանց քաղաքական ակտիվությունը ընդլայնելու արդյունավետ միջոց:

- 2021 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում ձևավորված Ազգային ժողովի ղեկավար խորհրդի, նախարարների կաբինետի և մարզային իշխանությունների գենդերային կազմը չի արտացոլում Ազգային ժողովի պատգամավորների թվում գենդերային քվոտայի շնորհիվ տեղի ունեցած կանանց ներկայացվածության զգալի առաջընթացը: Այդ համատեքստում կարելի է փաստել, որ քվոտան, նպաստելով քանակական ցուցանիշների բարելավմանը, չի խթանել կանանց քաղաքական առաջնորդությունը:

- ՀՀ Ազգային ժողովում կանանց 35.5 %-ով ներկայացվածությունը չի բերել կանանց «կրիտիկական զանգվածի» (առնվազն 30%) ձևավորմանը և այդ շեմի հետ կապված ակնկալիքների իրագործմանը, քանի որ, ըստ միջազգային մոտեցումների և փորձի, դա այն դեպքում է բերում քաղաքական և օրենսդրական դաշտում դրական փոփոխությունների, եթե դրան զուգահեռ կանայք նշանակվում կամ ընտրվում են ղեկավար և ազդեցիկ պաշտոնների խորհրդարանում, կառավարությունում և կառավարման այլ մարմիններում[7]:

- ՏԻՄ ընտրությունների ընթացքում նկատվող կուսակցությունների ընտրացուցակներից կանանց զանգվածային ինքնաբացարկները կամ մանդատից հրաժարումները թույլ են տալիս եզրակացնել, որ աջակցող մեխանիզմների (քվոտայի) կիրառումը/պահպանումը որոշ դեպքերում ձևական բնույթ է կրում, ինչը թեև բերում է կանանց ներկայացվածության ավելացմանը ավագանիներում, սակայն վարկաբեկում է հանրային ընկալումներում կանանց քաղաքական մասնակցության գաղափարը և լուրջ խոչընդոտ է կանանց քաղաքական առաջնորդության կայացման տեսանկյունից:

- Ընտրացուցակներում կանանց ներգրավման ձևական բնույթի մասին դիտարկումներ են արվել միջազգային դիտորդների կողմից նաև խորհրդարանական ընտրությունների ժամանակ, սակայն ՏԻՄ ընտրությունների ընթացքում այդ երևույթը ավելի բացահայտ և տեսանելի է դարձել տեղական մակարդակում կուսակցությունների չկայացվածության հետևանքով:

- ՏԻՄ ընտրությունների համամասնական ընտրակարգի անցումից հետո քաղաքացիական նախաձեռնություններով առաջադրվելու հնարավորության բացակայության հետևանքով երկար տարիների ընթացքում առաջնորդության դպրոցների միջոցով ձևավորված կանանց որոշակի ռեսուրսը դուրս է մնացել ընտրություններից:

[7] Gender-Sensitive Parliaments: A Global Review of Good Practice', Palmieri Sonia, IPU 2011.

- Ավագանիներում աշխատելու փորձառություն ունեցող կին առաջնորդներից շատերը, չնայած ստացված առաջարկներին, հրաժարվել են առաջադրվել որևէ կուսակցության ընտրացուցակով՝ քաղաքական իրավիճակի խիստ բևեռացման և տեղական մակարդակում կուսակցությունների չկայացվածության պատճառով:

- Ընդհանուր առմամբ, անկախ ՏԻՄ ընտրություններում գործող ընտրակարգից, համայնքի ղեկավարների թվում կանանց նվազ ներկայացվածության հիմնախնդիրը կանանց քաղաքական առաջնորդության խնդիր է: Համամասնական ընտրությունների դեպքում այդ խնդիրը կուսակցությունների պատասխանատվության դաշտում է: Հաշվի առնելով այն փաստը, որ կանանց ներկայացվածությունը կուսակցությունների ղեկավար կազմում շատ ցածր է և հաճախ չի համապատասխանում նույնիսկ նրանց շարքային անդամների գենդերային համամասնությանը, ապա ցուցակները գլխավորելու հարցը հօգուտ տղամարդկանց է լուծվում: Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ այն դեպքերում, երբ կուսակցության ղեկավարը կին է, ցուցակը միշտ չէ, որ գլխավորել են կանայք: Մեծամասնական ընտրությունների դեպքում պատճառները կանանց առաջնորդությանը խոչընդոտող կարծրատիպերն ու ռեսուրսների պակասն են:

- Կանանց բացակայությունը խորհրդարանական և ՏԻՄ ընտրություններին ընտրացուցակները գլխավորող դիրքերում, ընտրացուցակներում կանանց ներգրավման ձևական բնույթը փաստում են կուսակցությունների ներսում գենդերազգայուն կադրային քաղաքականության, կանանց առաջնորդությունը ձևավորելու, ընտրացուցակները կազմելու սկզբունքներ մշակելու հարցերում լուրջ թերացումների մասին: Ընտրական գործընթացներն անուղղակի հաստատում են այն փաստը, որ կանանց ներկայացվածությունը կուսակցությունների ղեկավար մարմիններում ընդլայնելու նպատակով «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքով ներդրված խրախուսական մեխանիզմները դեռևս չեն աշխատում, և կուսակցությունները լիովին չեն գիտակցում իրենց բաժին պատասխանատվությունը կանանց քաղաքական առաջընթացն ապահովելու գործում:

- Առավել դժվար է հաշմանդամություն ունեցող կանանց մուտքը քաղաքականություն և ներկայացվածությունը որոշումների կայացման մակարդակում, քանի որ այստեղ գործում է «կրկնակի խտրականության» սկզբունքը:

- Այս համատեքստում պետության գենդերային քաղաքականության շրջանակում նախանշվող նպատակների թվում առաջնահերթ է դառնում կանանց քաղաքական առաջնորդության ձևավորման հարցը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նպատակաուղղել պետական գենդերային քաղաքականությունը կանանց քաղաքական առաջնորդության ձևավորմանը՝ հիմք ընդունելով ՀՀ գենդերային քաղաքականության 2019-2023 թթ. ռազմավարության մեջ նախանշված *կանանց առաջխաղացման ազգային մեխանիզմն ամրապնդելու մասին* նպատակը:
- Հետևողականություն ցուցաբերել կանանց քաղաքական առաջնորդությունը խթանելու և որոշումների կայացման մակարդակում կանանց, այդ թվում հաշմանդամություն ունեցող կանանց, մասնակցությունը ապահովելու համար լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու ուղղությամբ:
- Ապահովել քաղաքական գործընթացներում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի, նախևառաջ՝ կուսակցությունների պատասխանատու մասնակցությունը կանանց քաղաքական առաջնորդության ձևավորմանը և իրագործմանը:
- Նախաձեռնել գենդերային աջակցող մեխանիզմների գործընթացը և քվոտայի կիրառումը ոչ միայն ընտրովի, այլ նաև գործադիր իշխանության քաղաքական և բարձրագույն նշանակովի պաշտոնների դեպքում՝ հիմնվելով Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի Հայաստանի Հանրապետության 7-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում առկա առաջարկի վրա՝ ժամանակավոր հատուկ միջոցների կիրառումը ընդլայնելու մասին:
- ՀՀ ընտրական օրենսդրության բարեփոխման շրջանակում ուսումնասիրել և առաջարկել ՏԻՄ և խորհրդարանական ընտրություններում բացահայտված գենդերային քվոտան նվազեցնող երևույթները հետագայում կանխելու մեխանիզմներ:
- Բարելավել գենդերային վիճակագրության հավաքագրումը և մշտադիտարկում իրականացնել ՏԻՄ համակարգում, գործադիր, օրենսդիր և դատական իշխանության բոլոր մակարդակներում կանանց ներկայացվածության վերաբերյալ:
- Հետևողականություն ցուցաբերել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընտրական գործընթացների գենդերային ուղղորդման գործում:

- Համապատասխանեցնել ՏԻՄ համակարգին վերաբերող օրենսդրությունը՝ ի նկատի առնելով խոշորացման գործընթացների և համամասնական ընտրակարգի անցնելու առանձնահատկությունները:
- Նախատեսել ՏԻՄ ընտրություններում համամասնական ընտրակարգի շրջանակում քաղաքացիական նախաձեռնությունների առաջադրման հնարավորությունը, ինչը կարող է տեղական մակարդակում կուսակցությունների չկայացվածության պայմաններում ժամանակավոր լուծում հանդիսանալ ավագանիներում փորձառու և ակտիվ կանանց ռեսուրսը լիարժեք օգտագործելու համար:
- Հաշվի առնել գենդերային հավասարության սկզբունքը կամ կիրառել գենդերային քվոտան վարչական ղեկավարներ նշանակելիս:
- Նախաձեռնել կանանց քաղաքական առաջնորդությանն ուղղված ծրագրեր և ուսուցման դասընթացներ, խրախուսել գենդերային հավասարության և կանանց զորացման ուղղությամբ նախաձեռնությունները տեղական և ազգային մակարդակում:
- Համագործակցել քաղաքացիական հասարակության հետ՝ համայնքային մակարդակում գենդերային խտրականությանը նպաստող «վնասակար գործելակերպերի» հաղթահարման գործում:
- Բարելավել կուսակցություններում կանանց առաջնորդության ձևավորմանն ուղղված օրենսդրական մեխանիզմները՝ չսահմանափակվելով միայն ֆինանսական խրախուսման մեխանիզմով:

***

Այս քաղաքականության համառոտագիրը պատրաստված է 2021 թ. ՀՀ ԱԺ և 2021-2022 թթ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքների վերլուծության հիման վրա և արտացոլում է ծրագրի փորձագետների, ինչպես նաև Երևանում և ՀՀ մարզերում անցկացված երկխոսության միջոցառումների մասնակիցների տեսակետները:

Նյութը պատրաստվել է Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսական աջակցությամբ: Այնուհանդերձ արտահայտված տեսակետները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ համընկնեն Միացյալ Թագավորության կառավարության պաշտոնական դիրքորոշման հետ: Նյութում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետների հետ: